ԼՈՌՎԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Արևելյան Գուգարքում Կյուրիկյանների համարյա մեկուկես դար տևած տիրապետության ժամանակաշրջանի պատմության հարցերը հայագիտության մեջ լայնորեն լուսաբանվել են։ Այնուհանդերձ դեռևս կան ճշտման կարոտ առանձին խնդիրներ. դրանցից են, օրինակ, Լոռվա կամ Տաշիր-Զորագետի թագավորության առաջացման նախադրյալների, ժամանակի, Բագրատունիների կենտրոնական իշխանության հետ տեղական կառավարողների ունեցած փոխհարաբերությունների հարցերը։ Սույն հոդվածը մի փորձ է քննարկելու նշված խնդիրները։

Կյուրիկյանների Լոռվա թագավորության հիմնադրման տարեթվի շուրջ արտահայտված պատմաբաններին կարելի է բաժանել երկու խմբի՝ գիտնականներ, որոնք Տաշիր-Զորագետին անդրադարձել են հայ ժողովրդի ընդհանուր պատմության շրջանակներում և չեն ընդգրկել մեզ հետաքրքրող հարցին վերաբերող բոլոր սկզբնաղբյուրները։ Դրանցից առաջին հերթին պետք է նշել Մ. Չամչյանին[1]։ Երկրորդ. Կյուրիկյանների պատմությամբ հատուկ զբաղվողներ, որոնք առանձին քննություն են կատարել խնդրո առարկա տարեթիվը ճշտելու համար։ Դրանք են Ղ. Մովսիսյանը և տողերիս հեղինակը։ Վերջիններս հանգել են բոլորովին տարբեր եզրակացությունների, առաջինը նշել է 980[2], իսկ երկրորդը՝ 972 թ.[3]։ Այսպիսով, առաջարկված տարեթվերը տատանվում են մեկ տասնամյակի սահմաններում։ Մեզ թվում է, որ միայն վերջին երկուսի շուրջ կատարած լրացուցիչ քննությունը կարող է նպաստել զբաղեցնող տարեթվի ճշտմանը, քանի որ Մ. Չամչյանի առաջարկած տարեթիվը՝ 982, բավարար չափով չի հիմնավորված։

Հարցի լուծման համար որոշիչ նշանակություն ունեն Սանահնի վանքի «Քյոթուկ» կոչված գրառումների մատյանի X դ. դրված երկու վավերագրերը՝ վանքի քարտուղար Սիմեոնի հիշատակարանը և Սմբատ II Տիեզերակալ թագավորի (977—990) հրովարտակներից մեկի պատճեն։ Նրանց միջոցով միայն, իհարկե համադրելով այլ կռվանների հետ ու լրացնելով, կարելի է հաջողությամբ լուծել ինչպես տարեթվի, այնպես էլ Լոռվա թագավորության պատմության հետ առնչվող այլ խնդիրներ։ Սակայն «Քյոթուկի» տվյալների քննությունից հետո վերոհիշյալ երկու ուսումնասիրողները (Ղ. Մովսիսյան, Ռ. Մաթևոսյան) առաջարկել են տարբեր տարեթվեր։ Այդ տարակարծու-

---

1 Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» երկրորդ հատորում (Վենետիկ, 1785, էջ 851) նշված է 982, որը հետագայում ընդունել են նաև Մ. Բրոսեն, Լեոն, Հ. Մանանդյանը։

2 Ղ. Մովսիսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վիեննա, 1923, էջ 28։

3 Ռ. Մաթևոսյան, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 199—202)։

թյունը լուծելու համար անհրաժեշտ է նորից անդրադառնալ սկզբնաղբյուր-վավերագրերին։

Ղ. Մովսիսյանի գլխավոր կռվանն է Սմբատ Տիեզերակալի 979 թ. հրովարտակը՝ դրված եղբորը՝ Տաշիր-Զորագետի կառավարիչ Գուրգենին Սանահնում տեսակցելու ժամանակ։

Հրովարտակում ասված է. «...Ես, Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց ... Եկի ի տեսութիւն սբ. ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ և խոսրովանույշ թագուհին՝ հայրն և մայրն իմ, ...վասն որոյ և սիրեցի, և սիրոյ նշան արարեալ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան և սահմանեցի զվիճակ սբ. Ա[ստուա]ծածնիս և սբ. հայրս վանանց զԵսայի ետու առնել եպիսկոպոս մեծի հայրապետին Հայոց Խաչկայ. և անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և երկիրս զայս Սանահնիս. զամենայն երկիրն Տաշրաց...։ Ես՝ Սմբատ թագաւոր, իմ թագաւորական իշխանութեամբն և կաթողիկոսաց հրամանաւք զաթոռս զայս և վիճակս հաստատեցի ի Սանահնիս սբ. Աստուածածնիս, որ էր գերեզմանատուն նախնեաց մերոց... գրեցաւ ի թուականին հայոց չորս հարիւր քսան և ութ» (979 թ.)[4]։

Հրովարտակի բովանդակությունից Ղ. Մովսիսյանը եզրակացնում է, որ 979 թ. Սմբատ թագավորը հիմնել է Սանահնի եպիսկոպոսական վիճակը, որոշել նրա սահմանները և եղբորը՝ Գուրգենին, նշանակել Տաշիրի թագավոր, որի կապակցությամբ տեղի է ունեցել Տաշիրի անկախության հանդիսավոր արարողությունը Սանահնում[5]։ Հաշվի առնելով Մխիթար Այրիվանեցու վկայությունը, որը Գուրգենի թագավորությունը գնում է 981 թ. տակ[6], նա թագավորության ստեղծման տարեթիվը ընդունում է երկու թվերի միջինը՝ 980 թ.։

Մեր կարծիքով սխալ է Սմբատի հրովարտակից եզրակացնել, որ 979 թ. Սանահնում հիմնվել է եպիսկոպոսական վիճակ։ Որ Տաշիր-Զորագետում մինչ այդ արդեն գոյություն ուներ եկեղեցական թեմ, պարզ երևում է Սանահնի վանական Սիմեոնի հիշատակարանից, գրված նույն վանքում՝ 972 թ.։ Հիշատակարանում կարդում ենք. «Ես անարժանս ի կրաւնաւորաց փցուն գրիչս Սիմէաւն՝. ի թուականութեան հայոց ՆԻԱ (972). ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին, հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութիւն ամք Զ, զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ, ամուսինն Աշոտոյ Հայոց շահնշահի... և առաջին ամի հայրապետութեան հոգեւոր հաւրն հանուրց տեառն Խաչկայ արժանաւոր վերադիտողի, և յեպիսկոպոսութեան մերումս նահանգի գաւառիս Տաշիր Գրիգորի արժանաւոր հաւտապետի, որ և նորա յառաջնորդութեան են ամք Բ ի թագաւորութիւն Աշոտոյ եւ նորին որդւոյ Սմբատայ, քաջք և յաղթողք թագաւորք Հայոց։ Արդ որք ընթերնոյք... յիշեսջիք ի մաքրամատոյց յաղաւթս ձեր զԱշոտ շահնշահն և զշինաւղ սուրբ ուխտիս զբարեպաշտ և զա[ստուա]ծասէր թագուհին. և զիւրեանց որդեական ղարի և քաջ շինաւղն Հայոց թագաւորն Սմբատ, և զեղբարս նորին զԳագիկն և զԳուրգէն. ևս առաւել յիշելոյ արժանի համարեսջիք զհանգուցեալ սուրբ հայրն մեր առ Քրիստոս Պաւղիկարպոս, որ սկիզբն արար վանիցս շինութեան և փո-

4 Մատենադարանի ձեռագիր № 3031 (այսուհետև՝ «Քյոթուկ»), էջ 46—50։

5 Ղ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 26։

6 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860, էջ 56։

խեցաւ ի դասս անմարմնոցն. որոյ հանգստեան են ամք Բ. ևս առաւել յիշեսջիք զնորին փոխանորդ զուխտի առաջնորդս զհայրն Գրիգոր մաքուր յոյժ...»[7]։

Այս հիշատակարանում ներկայացված են գրչին ժամանակակից եկեղեցականները, որոնք գլխավորում էին հոգևոր իշխանությունը Սանահնի վանքում և ամբողջ Տաշիրում։ 972 թ. երկրամասի եպիսկոպոսն էր հայր Գրիգորը, որը առաջնորդությունը ստանձնել էր 970 թ., հաջորդելով հայր Պոլիկարպոսին։ Ջնայած հիշատակարանում վիճակ բառը բացակայում է, բայց պարզ է, որ Գրիգորն ու Պոլիկարպոսը եղել են Տաշիրի թեմի եպիսկոպոս առաջնորդներ, որովհետև վարել որևէ մարզի եպիսկոպոսությունը, նշանակում է գլխավորել տեղական եկեղեցական կազմակերպությունը, որը նույն վիճակն է։ Սիմեոնի խոսքերով, Պոլիկարպոսը սկիզբ է դրել (Խոսրովանույշ թագուհու օժանդակությամբ) վանքի շինությանը։ Խոսքը տվյալ դեպքում Ամենափրկիչ եկեղեցու մասին է, որի կառուցման տարիներից (966—972) հաշվում են վանքի հիմնադրումը։ Առաջին վանահայրը եղել է Հովհաննեսը, որը պաշտոնավարել է Գրիգոր եպիսկոպոսի (ամենայն հավանականությամբ նաև Պոլիկարպոսի) օրոք և հիշված է Սիմեոնի հիշատակարանում («Հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի»)։ Նրա կարգադրությամբ Սիմեոնը արտագրել է Բարսեղ Կեսարացու «Յաղագս Ճգնողականաց» դիրքը։

Եթե այդպես է, ապա ի՞նչ էր կատարվել Սմբատի այցելության ժամանակ։ Յուրաքանչյուր վիճակ ունենում է իր մայր եկեղեցին։ Այդպիսին, բնականաբար, լինում է վանքի գլխավոր շինությունը։ Սանահնում սկզբնապես դա Ամենափրկիչ եկեղեցին էր։ Սմբատի հրովարտակում ասված է. «...հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան և սահմանեցի զվիճակ սբ. Աստուածածնիս...»։ Մեր կարծիքով, այդ տողերից բխում է, որ թագավորը Տաշիր վիճակի մայր եկեղեցին դարձրել է վանքի Աստվածածնի եկեղեցին, շնորհելով նրան եպիսկոպոսական աթոռ։ Քանի որ Աստվածածնի աթոռին ենթակա էր ամբողջ Տաշիրը («զամենայն երկիրն Տաշրաց»՝ այդպես էին անվանում Լոռվա թագավորությունը Բագրատունյաց շրջանի մատենագիրներն ու պատմագիրները), ապա Սանահնում միաժամանակ երկու եպիսկոպոսական աթոռ՝ Ամենափրկչի և Աստվածածնի չէին կարող լինել։ Պետք է ենթադրել, որ առաջինը վերացվեց, իսկ ավելի հավանական է, որ Աստվածածինը փոխարինեց Ամենափրկչին։

«Քյոթուկի» այս երկու վավերագրերի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ Տաշիրում եկեղեցական վիճակը կազմակերպվել էր 979 թ. շատ ավելի շուտ՝ 960-ական թվականների երկրորդ կեսին, Ամենափրկիչ եկեղեցու շինարարությանը զուգընթաց, որի առաջին առաջնորդն էր Պոլիկարպոսը։ Վիճակը ընդգրկում էր այն տարածքը, ուր առաջ էր եկել Լոռվա թագավորությունը։ Ուրեմն, Սմբատի այցելության նպատակը վիճակի հիմնումը չի եղել։ Ստորև կաշխատենք պարզել նրա իսկական դրդապատճառները։

Մինչև 979 թ. Տաշիր-Զորագետում թագավորության բացակայությունը կարծեք հաստատվում է նաև նրանով, որ Սիմեոնի հիշատակարանում չկա որևէ ակնարկ Տաշիրի թագավորության մասին և Գուրգենը համապատասխան տիտղոսով չի հորջորջվում[8]։ Մինչև այժմ այդ փաստը մենք բացատրել ենք

---

7 «Քյոթուկ», էջ 37—40։

8 Հմմտ. Ղ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 24։

նրանով, որ Գուրգենը կարող էր թագ ստանալ հիշատակարանը գրվելուց հետո, բայց նույն թվականին[9]։ Այժմ լրացնելով մեր հիմնավորումը, ցանկանում ենք ընդգծել, որ Սմբատ Տիեզերակալի հրովարտակում նույնպես ոչ մի խոսք չկա Սանահնում եղբորը թագ շնորհելու մասին, անհասկանալի լռություն, եթե Գուրգենի թագադրությունը իրոք տեղի ունենար Սմբատի այցելության ժամանակ։ Հրովարտակը ընդօրինակող գրիչը Գուրգենին անվանում է պարզապես «Տաշիրի իշխան». «...ի սոյն ժամանակս պատահէ և բարեպաշտ թագաւորեաս Սմբատայ երթալ ի տեսութիւն եղբաւրն իւրում հարազատին Գուրգէնայ, որ էր յայնժամ իշխան բնաւ երկրին Տաշրայ»[10]։ Բագրատունյաց շրջանում Հայաստանում «իշխան» էին կոչվում խոշոր հողատեր սեփականատերերը, որոնք իրենց տիրույթներում ունեին նաև քաղաքական իշխանություն[11]։ Բացի այդ, «իշխան» բառը նշանակում է նաև պետական պաշտոնյա, տեղական գործակալ։ Բագրատունիների կողմից պետականության վերականգնումից անմիջապես հետո երկրում ստեղծվեց կենտրոնական և տեղական վարչական ապարատ, գավառներում նշանակվեցին կառավարիչներ։ Դրանք արքունիքից հաստատված պաշտոնյաներ էին՝ իշխաններ (կոչվում էին նաև կուսակալներ կամ վերակացուներ), որոնք տեղերում իրականացնում էին վարչական ֆունկցիաներ։

Տաշիր-Զորագետում (Արևելյան Գուգարքում), որը Բագրատունիների տոհմական դոմենի (ոստանի) մասն էր կազմում, նույնպես նշանակվեցին կառավարիչներ[12]։ Սմբատ I-ի և Աշոտ II-ի օրոք երկրամասի կառավարումը վստահված էր Գնթունիներին։ Գնթունյաց ֆեոդալական տան անդամները Բագրատունիներին ենթակա վասալներ էին և X դ. որոշ պաշտոններ էին վարում արքունիքում և գավառներում։

Գնթունի Հասանին Հովհաննես Դրասխանակերտցին անվանում է «հրամանատար տոհմ արքայի», «իշխան և հրամանատար տերութեան արքայի», իսկ նույն տոհմից Աշոտ և Վասակ եղբայրներին Սմբատ I-ը նշանակել էր Տաշիր-Զորագետի «բերդապահ և վերակացու»[13]։ Նրանց նստավայրը Շամշուդե բերդավանն էր։ Աշոտ II-ի ժամանակ նրանք ըմբոստացել էին կենտրոնական իշխանության դեմ։ Ջնայած ըմբոստությունը ճնշվել էր[14], տեղական վերակացուների կենտրոնախույս նկրտումները իշխող դինաստիային ստիպեցին Տաշիրի կառավարումը հանձնել իր տոհմակիցներին և այդ եղանակով երկրի հյուսիսային շրջանները ամուր կապել կենտրոնի հետ։ «Տաշիր երկրի» մարզերը Բագրատունյաց թագավորության ներսում առանձնացվեցին որպես հատուկ վարչա-քաղաքական կազմավորում, որի Բագրատունի առաջին կառավարիչն էր Աշոտ Ողորմածի (953—977) կրտսեր որդի Գուրգենը.

---

[9] «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 200։

[10] «Քյոռուկ», էջ 43։

[11] Հ. Հ. Ութմազյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958, էջ 148, 153—155, Վ. Բ. Բարխուդարյան, Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում IX—XI դդ. (թեկնածուական դիսերտացիա), էջ 107, 145, 164։

[12] Հովհաննես Դրասխանակերտցին դրում է, որ Աշոտ I-ը Դուգարքում և Ուտիքում նշանակէ էր առաջնորդներ (հոգևոր) և իշխաններ («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 140)։

[13] Նույն տեղում, էջ 179, 205, 295։

[14] Նույն տեղում, էջ 295—297, 316—318։

Ե՞րբ տեղի ունեցավ այդ առանձնացումը և ինչպիսի՞ն էր նոր կառավարիչների դիրքը ֆեոդալական հիերարխիայում։ Այդ հարցի պատասխանը կօգնի լուծելու նաև մեզ զբաղեցնող խնդիրը։

«Տաշիր երկիրը» Գուրգենին հանձնելուց հետո տեղական իշխանության իրավա-քաղաքական ստատուտը էապես փոխվեց։ XII դ. կազմված մի ժամանակագրություն, որը կրում է «Թագաւորք վերջինք Բագրատունիք» խորագիրը, կարևոր մանրամասն է հաղորդում այդ մասին։ «Իսկ սոքա (Աշոտ III-ի որդիները՝ Սմբատը, Գագիկը և Գուրգենը—Ռ. Մ.) համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ, և Գուրգէն տիրէ Գոգարացւոց կողմանս, սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփխաց»[15]։ Այս տեղեկությունը վկայում է, որ արքայազն եղբայրները («արքունի տան գահերեցները»)[16] փոխադարձ համաձայնությամբ բաժանել են երկիրը, ավագին ճանաչելով թագավոր։ Այստեղ «բաժանել» բառը չպետք է հասկանալ այն իմաստով, որ Հայոց թագավորությունը Աշոտ III-ից հետո մասնատվեց։ Բագրատունյաց շրջանում գոյություն ուներ գահակցության ինստիտուտ, որի վրա մեզ մոտ սովորաբար ուշադրություն չի դարձվում։ Աշոտ Ողորմածի ժամանակ նրա ավագ որդին (Սմբատը) իր գահակիցն էր[17]։ Գահակցության ինստիտուտը հետապնդում էր (ինչպես ամենուր) մեկ նպատակ՝ պաշտպանել թագաժառանգի իրավունքները և կանխել գահակալական պայքարը։ Ինչպես երևում է վերոհիշյալ ժամանակագրությունից, Սմբատի եղբայրները չեն վիճարկել նրա իրավունքները և մնացել են «արքունի տան գահերեցներ», ստանալով իրենց բաժինները։ Այդ ամենը կատարվել է «համակամությամբ»։ Ուշադրության արժանի է Գուրգենի բաժնեմասի անվանումը։ Ժամանակագրությունում ասված է, որ նա իր փոխարեն «կացուցանէ զէրէց որդի իւր զԴաւիթ, որ և նա բարեպաշտութեամբ վայելէ ի հայրենի իշխանութեանն. և ապա Կիւրակէ, որդի իւր, զկնի նորա թագաւոր...»[18]։ Այստեղ առաջին Կյուրիկյանների տիրույթը անվանված է «հայրենի իշխանութիւն»։ Հայտնի է, որ Բագրատունյաց տիրապետության շրջանում հայ խոշոր ֆեոդալների («իշխանների» կամ «տերերի») հողային տիրույթները կոչվել են «հայրենի ժառանգութիւն», «հայրենի տերութիւն»։ Այդ հողերին ֆեոդալները տիրել են մասնավոր ժառանգական-սեփականատիրական իրավունքով, եղել են նրանց անմիջական և լիիրավ տերերը[19]։ Սակայն Գուրգենի տիրույթը կոչվել է «հայրենի իշխանութիւն»։ Դա արդեն այլ կատեգորիայի հողատիրություն է։ Աղբյուրներից երևում է, որ IX—XI դդ. այդպես էին կոչվում այն հողերը, որոնց տերերի իրավունքները պայմանական էին, այլ ոչ թե սեփա-

---

15 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 501, հմմտ. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90։

16 Այդպես էին անվանվում թագավորի որդիները (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 143)։

17 Հմմտ. Սիմեոնի հիշատակարանը։ Միայն Ղ. Մովսիսյանն է ուշադրություն դարձրել այդ հանգամանքի վրա (նշվ. աշխ., էջ 24)։

18 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 502։

19 Վ. Բ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 62, 92, 145, 165, Հ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 144—147, 167։ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1955, էջ 77—87։ Սեփականատիրական ժառանգական հողերը կոչվել են նաև «սեփական տէրութիւն», «հայրենի սեփականութիւն», «բնիկ տէրութիւն» և այլն։

կանատիրական[20]։ Որպես Կյուրիկյան՝ տեղական ֆեոդալական տան առաջին անդամ, Գուրգենը կարող էր Տաշիր-Զորագետը ստանալ միայն արքունիքից՝ ծառայության դիմաց։ Նման հողերում՝ «հայրենի իշխանություններում» ֆեոդալները ունեին իշխելու, կառավարելու իրավունք։ Մյուս կողմից՝ «հայրենի» բառը վկայում է, որ այդ «իշխանությունը» եղել է Կյուրիկյանների հայրենիքը, բայց պայմանական բնույթի՝ ֆեոդ, տիրույթ պայմանական-ժառանգական իրավունքով[21]։ Այլ կերպ Գուրգենը՝ Բագրատունյաց Լոռվա ճյուղի հիմնադիրը, Տաշիր-Զորագետի հայրենատերը չէր և երկիրը ստացել էր «վերևից» (արքունիքից) իր ազգապետ և հայրագլուխ Հայոց շահնշահից[22]. Դրանով նա տարբերվում էր Սյունիքի ու Վասպուրականի գահակալներից։ Բայց Կյուրիկյանները փոխանցում էին իրենց իշխանությունը ժառանգաբար՝ հորից որդի։ Դրանով իսկ նրանք տարբերվում էին Գնթունիներից, որոնք նման արտոնություն չունեին։ Ուրեմն, Տաշիր երկիրը հանձնելով իր տոհմակիցներին. արքունիքը այդ երկրամասը դոմենի սովորական վարչական մարզից վերածեց ֆեոդի՝ պայմանական-ժառանգական տիրույթի։ Նման հողերի տերերը պետք է իրենց իրավունքների հաստատումը ստանային սյուզերենից։ Կյուրիկյանների սյուզերեններն էին Հայոց շահնշահները, և Տաշիր-Զորագետի Բագրատունի տիրակալը ենթարկվում էր շահնշահներին, ինչպես կրտսերը՝ ավագին, վասալը՝ սյուզերենին։ Նրա հողատիրական իրավունքը և դրա հետ անխզելիորեն կապված վարչա-քաղաքական իշխանությունը այդ երկրում պայմանական բնույթ ուներ, քանի որ Լոռվա յուրաքանչյուր նոր կառավարիչ իր իրավունքների հաստատումը պետք է ձեռք բերեր արքունիքից։

---

20 Այսպիսին էր, օրինակ, Գեղարքունիքի գահակալ իշխան Վասակի տիրույթը։ Ատրպատականի ամիրա Յուսուֆի 909 թ. արշավանքի ժամանակ Վասակը եղբոր հետ ապաստանել էր Միափոր գավառում (հավանաբար Արցախում)։ Վերադառնալուց հետո նա ներկայացել էր նորապակ թագավոր Աշոտ II-ին, որը նրան «վիճակեցոյց իւրոյ տերութեանն» («Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 193)։ Հովհ. Դրասխանակերտցին իր հերթին Վասակին և նրա եղբայր Սահակին անվանում է «Կուսակալք քաւառացն որ շուրջ զեղեր ծովակին Գեղամայ, յայսմ ի սոյն աւուրս եկեալք ի հեռաստանէ հայածանացն՝ տիրէին պայազատեալք յաշխարհս տէրութեան իւրեանց» (Պատմութիւն հայոց, էջ 298)։ Ուրեմն Վասակը այդ ժամանակ իր հողաբաժնում ոչ թե «տեր», այլ «կուսակալ» էր, հաստատված Հայոց արքայի կողմից։ Նշանակում է, որ Աշոտ II-ը այդ հողաբաժնին տիրացել էր մեզ անհայտ պարագաներում։ Դա կարող էր տեղի ունենալ թեկուզ Վասակի փախուստի տարիներին։ Ամենայն հավանականությամբ Աշոտին հաջողվել էր ազատել Գեղարքունիքը արաբներից և միացնել արքայական ոստանին։ Թագավորից ստացած Վասակը նախկին ժառանգական տիրույթը պատմիչները անվանում են «հայրենի իշխանութիւն» (Ստ. Օրբելյան, էջ 190, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 230)։

21 Վաղ միջնադարում «հայրենիք» էին կոչվում միայն ժառանգական հողերը։ IX—XI դդ. և հետո այդ տերմինի իմաստը շատ ընդարձակվել է, այդպես էին կոչվում նաև գնման, նվիրատվության միջոցով ձեռք բերված հողերը։ Մեր մատնանշած դեպքում «հայրենիք» կոչվում է ֆեոդը։

22 Բագրատունի Հայոց թագավորը հայ ֆեոդալների հանդեպ «հայր» (կամ «հայրագլուխ») և շահնշահ էր, իսկ իր տոհմակիցների համար միաժամանակ և ազգապետ. հմմտ. С. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Վարարեր», 1971, № 3, էջ 8)։ Հ. Մանանդյանի կարծիքով՝ Բագրատունիների թագավորական տիտղոսը (խոսքը Հայոց թագավոր-շահնշահերի մասին է) լոկ տիտղոս էր, առանց իրական բովանդակության («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Բ, մաս Բ, Երևան, 1960, էջ 302, նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 202—203. Սա շատ սխալ և չհիմնավորված տեսակետ է, որին կանդրադառնանք այլ առիթով։

Միաժամանակ նոր գահ բարձրացած Հայոց թագավորը, ինչպես օրինաչափ նորմա էր ֆեոդալական հասարակարգում, պետք է ճանաչեր իր վասալների իրավունքները հատուկ հրովարտակով։ Ճանաչման այդպիսի վավերագիր «ամենայն Տաշրաց երկրի» վրա Սմբատ տիեզերակալից պետք է ստանար նաև Գուրգենը։ Վերջինս Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու բարձրաքանդակում պատկերված է արքայական իշխանության նշաններով՝ զգեստով ու թագով[23]։ Այդ նշանակում է, որ կառավարիչը թագադրվել է, տեղի է ունեցել նրա իշխանության պաշտոնական ճանաչումը արքունիքի կողմից։ Պայմանական-ժառանգական իրավունքներով օժտված Տաշիրի տիրակալի թագավորական տիտղոսը չպետք է զարմացնի կամ թյուրիմացության մեջ գցի։ «Թագավոր» տվյալ դեպքում նշանակում է ոչ թե «միապետ», պետության ղեկավար, այլ դասային տիտղոս է։ Նման թագավորները Բագրատունյաց Հայաստանի իշխող վերնախավում առանձին շերտ էին կազմում և Հայոց թագավորից (շահնշահից) հետո ֆեոդալական սանդուղքում գրավում էին երկրորդ աստիճանը։ Այդպիսիք էին Վասպուրականի, Սյունիքի, Կարսի և Լոռվա թագավորները, որոնք այդ սանդուղքում տեղ էին զբաղեցնում շահնշահից հետո և գահերեց իշխաններից առաջ[24]։ Նրանց մեջ կար իհարկե, ներքին աստիճանավորում։

Առաջին երկուսը տոհմական տիրույթների հայրենատեր-սեփականատերեր էին և իշխանությունները հոչակելով թագավորություն, միայն ավելի ակնառու էին դարձնում մասնավոր սեփականատիրական իրենց փաստական իրավունքը։ Թագավորության հոչակումով, ըստ էության, ոչինչ չէր փոխվում, քանզի Վասպուրականում կամ Սյունիքում թագավորությունների առաջացումը պայմանավորված էր տեղական ֆեոդալների ռազմական ու տնտեսական հզորությամբ[25]։ Բոլորովին այլ էր վիճակը Տաշիր-Զորագետում։ Այստեղ թագավորության առաջ դալը հետևանք էր արքունիքի վարչա-քաղաքական միջոցառումների, որոնց նպատակն էր ամրացնել երկրի ծայրամասերի կապը կենտրոնի հետ։ Ի տարբերություն Վասպուրականի կամ Սյունիքի, որոնք դառնալով թագավորություն ինչ-որ չափով թուլացրեցին կախումը Բագրատունյաց արքունիքից, Լոռին ավելի կապվեց նրա հետ։ Գուրգենի հաջորդ Դավիթը (996—1048) փորձելով աղատվել վասալական կախումից, 1001 թ. ըմբոստացավ Գագիկ I-ի դեմ։ Այդ ժամանակ է, որ Դավիթը մեծարվեց «ինքնակալ արքա»[26]։ Բայց նրա «ինքնակալական» հավակնությունները հաջողությամբ չպսակվեցին[27]։ Նա պարտվեց, կորցրեց տիրույթների մեծ մասը, որից հետո պարտա-

23 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 44։

24 Դավառական այս թագավորներին ուսումնասիրողները սովորաբար չեն առանձնացնում ֆեոդալական սանդուղքի ստորաբաժանման մեջ, ձուլելով նրանց գահերեց իշխանների հետ։ Միայն Հ. Հարությունյանի աշխատությունում՝ Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959, էջ 133, նրանք շատ թռուցիկ նշված են Հայոց թագավորից հետո։ Այնինչ որոշակի տարբերություն կար տեղական թագավորների և գահերեց իշխանի միջև՝ երկրի քաղաքական արտաքին և ներքին կյանքում։

25 Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 62, 92, 145, 165։

26 Ն. Ղաֆադարյան, Հաղրատ, Երևան, 1963, էջ 264։

27 Սովորաբար Դավթի ըմբոստությունը պատմագիտության մեջ դիտվում է որպես Հայոց թագավորությունից անջատվելու փորձ (Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 119,

վորվեց հնազանդվել Գագիկին «իբրև որդի առ հայր», իսկ Գագիկը՝ «հայրենի խնամով սիրել զնա»[28]։ Այս ակտով ակնառու ու պարզորոշ դրսևորված է «թագավոր» հասկացության քաղաքական իմաստը, դասային բովանդակությունը։ Տաշիր-Զորագետում իշխանությունը ստանձնելու ժամանակ Դավիթը լոկ «թագավոր» էր՝ ժառանգելով այդ տիտղոսը (պաշտոնը) հորից։ Հետո փորձեց դառնալ միապետ և կարճ ժամանակով անվանվեց «ինքնակալ»։ Եթե նրա ընդվզումը հաջողություն ունենար, ապա նա կդառնար իր տիրույթների հայրենատերը և կհավասարվեր Սյունիքի կամ Վասպուրականի գահակալներին։ Բայց նա պարտվեց և նորից իջավ «թագավորի» աստիճանի, որը իրեն իրավունք էր վերապահում տիրել իր հողերին (=թագավորությանը) որպես ֆեոդ, որովհետև պարտված Դավիթը երկրամասը կարող էր ետ ստանալ միայն տիրելու պայմանական իրավունքով[29]։ Նրա թագավորական տիտղոսը արտահայտում էր շահնշահի «հայրենի խնամի» տակ իշխող լինելու պարագան։ Նույնպիսի թագավոր-իշխող էր նաև նրա հայրը, իսկ «թագավորությունը»՝ տվյալ տոհմի արտոնությունը Տաշիր-Զորագետում վարչա-քաղաքական իշխանությունը ժառանգաբար իրականացնելու համար։ Այդ իմաստով չի կարելի Գուրգենի տիրապետությունը բաժանել երկու էտապների՝ իշխանական և թագավորական, ինչպես վարվում են առանձին ուսումնասիրողներ[30], Կյուրիկյաններին նմանեցնելով հայկական մյուս թագավորությունների գահակալներին։ Դա մեխանիկական հավասարեցում է, քանի որ վերջիններս մինչև թագավոր դառնալը իրենց բաժինների իշխաններն էին՝ գահերեցներ և հայրենատերեր։ Նրանց թագավոր դառնալուց հետո, ինչպես ասվեց, հողային իրավունքի տեսակետից ոչինչ չէր փոխվում։ Այնինչ Տաշիր-Զորագետում գահերեց իշխաններ չեն եղել, այդ գավառներում վերակացուներին փոխարինել են տիտղոսակիր Կյուրիկյան կառավարիչները, որոնց տիտղոսը վերևից շնորհված պատիվ էր, իշխելու արտոնության հետ կապված։ Այդ առումով նրանք կարող էին լինել միայն «թագավոր» արդեն վերը նշված իմաստով։ 1045 թ. հետո միայն, Հայոց շահնշահների անկումով, Լոռին դարձավ Կյուրիկյանների հայրենի տիրույթը։

Լոռվա թագավորության առաջացման տարեթիվը, այսպիսով, սահմանազատում է ոչ թե Գուրգենի իշխանության երկու տարբեր շրջանները, այլ

Լևոն Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 612—613, Ֆ. Երզնկյան, Հնախոսական տեղագրություն Հաղբատա («Արարատ», 1887, № 7, էջ 308—310)։

Այդպիսի դնահատականը շատ վիճելի է։ Չպետք է մոռանալ, որ Տաշիր-Զորագետը սահմանակից էր կամ մոտ էր քրդական և արաբական ամիրայություններին (Գանձակի, Դվինի, Ատրպատականի) և ենթակա ինչնամական հարձակումների վտանգին։ Պաշտպանության համար նա օգնության կարիք է զգացել առաջին հերթին Հայոց (Անի-Շիրակի) և հայկական մյուս վասալ թագավորություններից (հիշենք 1040 թ. Դվինի ամիրա Աբուսուարի հարձակման ժամանակ ստացած օգնությունը)։ Նման պայմաններում Լոռվա տիրակալի անջատումը Հայոց Բագրատունյաց թագավորությունից խիստ սպառնալիքի տակ կդներ երկիրը և Դավիթը այդպիսի քայլի չէր դիմի։ Մեր կարծիքով՝ նա միայն ձգտում էր հնարավորին չափով թուլացնել կախումը Բագրատունի ազգապետից և դառնալ իր հողերի լիիրավ տերը։

28 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 280։

29 Կյուրիկյանների հողերի մի մասը՝ Աղստևի լեռնահովիտը Կայան բերդով Գագիկ շահնշահը չվերադարձրեց Դավթին, այլ հանձնեց Պահլավունիներին (Վարդան, էջ 92, 99)։

30 Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 54, Լևոն, նշվ. աշխ., էջ 591, Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 106։

Լոռին նշանակովի պաշտոնյայի կողմից կառավարվող մարզից հատուկ քաղաքական կազմավորման վերածվելու (ժառանգական իշխողների տնօրինությամբ) ժամանակամիջոցը։ Այն որոշելու համար անհրաժեշտ է ճշտել, թե երբ Բագրատունի իշխողները փոխարինեցին վերակացուներին։

Ամենափրկչի բարձրաքանդակները[31] վկայում են, որ Կյուրիկյանները Լոռիում էին արդեն 972 թ., ուրեմն այդ ժամանակ կար նրանց ղեկավարած կազմավորումը, որն ուներ նաև իր եկեղեցական կազմակերպությունը՝ Տաշիրի թեմը։ Թեմի հիմնադրումը սերտորեն կապված է Տաշիր-Զորագետում Կյուրիկյանների հաստատվելու հետ։ Սանահնի ու Հաղբատի վանքերը նրանց տոհմական հոգևոր կենտրոններն էին և կոչված էին ամրացնելու կառավարիչների քաղաքական ազդեցությունը։ Վերակացուների (Գնթունիների և ուրիշների) ժամանակ այստեղ կային եկեղեցական սպասավորներ, բայց ոչ թեմ։ Տաշիրում վիճակի կազմավորման տարիներն ինքնին մատնանշում են Լոռվա թագավորության երևան գալու ժամանակը։ Վիճակի առաջին առաջնորդը՝ եպիսկոպոս Պոլիկարպոսը, նախապես եղել է Արշարունիքի Կամրջաձոր վանքի վանահայրը[32]։ Արշարունիքի հոգևորականների թվում նա մասնակցել է 969 թ. Անիի եկեղեցական ժողովին[33]։

Այսպիսով, Պոլիկարպոսը Տաշիր էր տեղափոխվել 969 թ. ոչ շուտ։ Մահացել է 970 թ. Սանահնում, ուրեմն՝ 969—970 թթ. Տաշիրի թեմը արդեն գործում էր։ Այս հանգամանքը թույլ է տալիս թագավորության կազմավորման տարեթիվը 972-ից առաջ տանել առնվազն երեք տարով։ Բայց մնում է անորոշ, Ամենափրկչի շինարարության սկզբին թեմը կար թե ոչ։ Ուստի ավելի ստույգ թիվ չենք կարող մատնանշել և, ըստ երևույթին, հնարավոր էլ չէ։ Պետք է նկատի ունենալ, որ Տաշիր-Զորագետում թագավորության կազմավորումը մի շարք ռազմա-քաղաքական միջոցառումների արդյունք էր, որոնք իրականացվում էին աստիճանաբար, ուստի անհնարին է ցույց տալ նրանց ավարտման որևէ կոնկրետ թվական, հնարավոր է միայն ճշտել վերափոխությունների իրագործման ժամկետները։ Այդ տեսանկյունից ակնհայտ է, որ բարեփոխումները տեղի էին ունեցել Աշոտ III-ի ժամանակ՝ 966—970 թթ. ընթացքում։

Այս բոլոր դիտողություններից հետո հնարավոր է եզրահանգել, որ Սմբատ Տիեզերակալի այցը Սանահին կապ չունի Լոռվա թագավորության առաջ գալու հետ։ Ինչպես եկեղեցական վիճակը, այնպես էլ թագավորությունը Լոռիում հիմնվել էին մինչև 979 թ.։ Սմբատը այցելել է Սանահին ոչ թե «Տաշիրի անկախությունը» հռչակելու կապակցությամբ, այլ Գուրգենին Տաշիր-Զորագետի կառավարիչ-թագավոր ճանաչելու և նրա իրավունքները հաստատելու (ինվեստիտուրա շնորհելու) առիթով։ Նման ինվեստիտուրա, անկասկած, Գուրգենը ստացած պետք է լիներ նաև Աշոտ III-ից, բայց նրանց

---

31 Բարձրաքանդակը՝ Գուրգենի և Սմբատի արձանիկներն են թագավորական զգեստով, նրանց վերևում փորագրված է. «Կորիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր» արձանագրությունը (Կ. Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 98)։

32 Ա ս ո ղ ի կ, էջ 174, 181։

33 Նույն տեղում, էջ 181—182, Մ ա ղ ա ք ի ա արք. Օ ր մ ա ն յ ա ն, Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 1115—1117։

պատճեններ «Քյոթուկում» չեն արտագրվել[34]։ Դա բացատրվում է նրանով, որ «Քյոթուկում» ընդհանուր բացառությամբ գրի են առնվել միայն Սանահնի վանքի հետ անմիջականորեն կապված գեպքերը։ Եթե Սմբատը չայցելեր Սանահին, նրա հրովարտակը նույնպես մեզ անհայտ կմնար։ Այս հանգամանքը առիթ է տվել սխալ եզրակացությունների հանգելու։

Այսպիսով, Բագրատունյաց նոր ճյուղի (Կյուրիկյանների) հաստատվելը Տաշիր-Ձորագետում կապված էր երկրի քաղաքական միասնությունը ամրապնդելու կենտրոնական իշխանության ձեռնարկած քայլերի հետ։ Նշանակովի պաշտոնյաների անհուսալիությունը ստիպեց արքունիքին Աշոտ III-ի օրոք կատարել արմատական վերափոխություններ։

ИЗ ИСТОРИИ ОБРАЗОВАНИЯ ЛОРИЙСКОГО ЦАРСТВА

Р. И. МАТЕВОСЯН

Резюме

В отличие от других областей Армении Багратидской эпохи (напр., Сюника или Васпуракана), где возникновение царств явилось результатом военного и экономического усиления местных правителей, наследственных владетелей родовых земель, в Лори (Ташир-Дзорагете) царство образовалось в результате административных преобразований центральной власти. Багратидский двор передал область царского домена Ташир-Дзорагет в условное владение младшему члену правящей династии, сыну Ашота III Гургену, признав его царем. Сведения, имеющиеся в первоисточниках, уточняют дату образования Лорийского царства — приблизительно 969—970 гг.

---

34 986 թ. Կուրթան գյուղի գերեզմանոցի խաչքարիս գրվել է հետևյալ արձանագրությունը. «ՆԼԵ թվականիս Հայոց թագաւորութեն Կուրիկէի հարազատ... ք Սարգիս Դավիթո Գորգի-նորունեցաք զսբ Գորգս բարեխոս ոգոց մերոց»։ Այն չի հրատարակված և մեզ է տրամադրել բանասիրական գիտ. թեկնածու Ս. Ավագյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։